

անվտանգ աշխատանքը: Նոր սահմանափակիչի աշխատանքի սկզբանքը հետևյալն է.

Թաթի փոխարեն տեղադրված է բեռ (6), որն աղատ կերպով կախված է մետաղաճոպանից (5): Վերջինս ձողի (4) օգնությամբ կոնտակտային թիթեղիկը (2) ձգելով մոտեցնում է կոնտակտին (1), հաղթահարելով զսպանակի (3) դիմադրության ուժը:

Բեռը նորմալից ալելի վեր բարձրացնելիս կեռի իրանը հենվում է բեռին (6), և նա կեռի

հետ միասին բարձրանում է վեր: Այդ գեպքում թուլանում է մետաղաճոպանը (5), և զսպանակի (3) ազդեցության տակ կոնտակտային թիթեղիկը (2) բարձրանում ու անջատում է թմբուկի էլեկտրաշարժիչը էլեկտրական շղթան:

Վեց ամսից ավելի է, ինչ կատարելագործված սահմանափակիչը գտնվում է շահագործման մեջ: Նա լիովին համապատասխանում է տեխնիկական պահանջներին և ոչ մի անգամ աշխատելուց շի դադարել:

ՓՈՒՔԻ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻԴԱՑԻՆ ՎԱՐԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՆՏԵՆՍԻՎԻԿԱՑՄԱՆ ՓՈՐՁ

Ա. ՀԱԽՆԱԶԱՐՈՎ
Կիրովականի Ժիմկոմբինատի գլխավոր ինժեներ

Հ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԻՐՅԱՆ

Տեխնիկական գիտույթունների քեկեածու

Որոշ գործարաններում դեռ աշխատում են բավական մեծ թվով 5000 և 7500 կվա կարողությամբ էլեկտրական կարրիդային վառարաններ, որոնք, մեր տեսակետից, կարող են կալցիումի կարբիդի արտադրության ինտենսիֆիկացման օբյեկտ հանդիսանալ: Տրանսֆորմատորի արժեքը բարձրավոլտ հանգույցի ապարատուրայի հետ միասին կազմում է կարրիդային ագրեգատի ընդհանուր արժեքի մոտ 15—20%-ը: Մնացած տեխնիկական տնտեսության մեջ մտնում են սարքավորման ցածրավոլտ և տեխնոլոգիական մասերը՝ կարբիդի ընդունման և վերամշակման օլավաների հետ միասին (մինչև ապրանքային պրոդուկտի ստացումը):

Գործարանի շատ աշխատողներ վաղուց են այն կարծիքը հայտնել, թե նշված վառարանների կարողության աճումը հնարավոր է իրականացնել երկրորդային լարումների որոշ բարձրացմամբ, թողնելով ցածր կոռմի հոսանքի ուժը առանց փոփոխության: Այդ գաղափարի իրականացումը զգալիորեն կբարելավի վառարանի էլեկտրական բնութագիրը, մասնավորապես, այնպիսի կարևոր պարամետրը, ինչպիսին է կարողության գործակիցը: Սակայն վառարանային ագրեգատի ֆական կոնստրուկտիվ փոփոխություններ չեն կատարվում, բացառությամբ բարձր

լարման ապարատուրայի որոշ տարրերի ուժեղացման: Քանի որ փոքր կարողության այդ վառարաններն աշխատում են քառորդ դարից ավելի, ուստի տնտեսապես ավելի նպատակահարմար կլիներ վառարանների տրանսֆորմատորների կապիտալ-վերականգնիչ նորոգումը համատեղել նրանց մոդեռնացման հետ՝ ցածր կոռմից բարձր լարումների համար վերափաթաթելու միջոցով:

Նշված նկատուառաններից են ելով, Կիրովականի քիմկոմբինատուամ գլխավոր էներգետիկ Զ. Մալյանի, առևն հոդվածի հեղինակների և արտադրության Յ մասնագետի (Դ. Աղաբարյանի, Ա. Օհանյանի, Ս. Խանգելյանի) նախաձեռնությամբ ու մասնակցությամբ մշակվել է 5000 կվա կարողությամբ մեկ կարբիդային վառարանի ինտենսիֆիկացման նախագիծը:

Վերակառուցվող տրանսֆորմատորի համար երկրորդային լարումների ընտրությունը չի կարող կամայական լինել, և նրանց արժեքները անհրաժեշտ էր համաձայնեցնել տեղակայման այնպիսի կոնկրետ մուենատների հետ, ինչպիսիք են՝

1. առկա միջէլեկտրոդային տարածությունը, որի էական փոփոխությանը խոշնդրություն է ը վառարանի հեծանների և կախովի կոնստրուկցիաների կոնկրետ դասավորությունը.

2. էլեկտրոդի հոսանքի խտության մեծությունը.

3. կիրառվող բովախառնուրդի հատկությունները՝ էլեկտրահաղորդականության և հատիկավորման տեսափետից.

4. վաննայի ներքին շափերը, վառարանի արտաքին գարարիտները պահպանելու դեպքում:

5000 կվա կարտուֆյամբ հին տրանսֆորմատորը պատրաստվել է 1932 թ., երկրորդային գրային լարումների 8 աստիճաններով՝ 77,7—82, 1—86, 9—92, 5—98, 7—103, 4—108, 6—114, 3 վ: Հոսանքի ուժը 8-րդ աստիճանում հավասար է 25300 ա:

Եահագործման պրակտիկան ցույց է տվել, որ տրանսֆորմատորի ներքին աստիճանները երբեք չեն օգտագործվում, քանի որ վառարանի աշխատանքի գործարկման ժամանակաշրջանը խիստ կարճատև է և այն լիովին ապահովվում է 5 աստիճաններով: Այսպիսով, աստիճանների առատությունը կոնստրուկտիվութեան բարդացնուած է վառարանային տրանսֆորմատորի կառուցվածքը: Այդ մունենուր հաշվի առանձնությունը, նոր տրանսֆորմատորը պատվիրվել էր երկրորդային լարումների 5 աստիճաններով՝ 136—143—151—160—170 վ:

Ենելով երկրորդային լարումների այդ արժեքներից, տրանսֆորմատորի բեռնավորումը ըստ աստիճանների, 25500 ա հոսանքի անփոփոխ ուժի դեպքում, կներկայացնի հետևյալ պատկերը.

Տրանսֆորմատորի աստիճանները	ԲԼ փաթույթ		ՑԼ փաթույթ		Տրանսֆորմատորի կարտուֆյունը կվա
	Ի մ բ ո ւ յ թ	Հ ո ս ա ն ք ա ն ս թ	Ի մ բ ո ւ յ թ	Հ ո ս ա ն ք ա ն ս թ	
5-րդ	6300	688	170	25500	7500
4-րդ	»	648	160	»	7060
3-րդ	»	612	151	»	6660
2-րդ	»	579	143	»	6310
1-ին	»	550	136	»	6020

Անցված կարողության վառարանի վաճենայի պարամետրերը

ՑՊԱՆԻՉՆԵՐ	ՀԻՆ ՎԱՐԱՐԱՆ	ՆՈՐ ՎԱՐԱՐԱՆ
1. Տեսակարար մակերևույթային կարողությունը	$\frac{5000}{6,79 \times 2,39} = 308$ կվա/մ ²	$\frac{6020}{6,79 \times 2,39} = 370$ կվա/մ ²
2. Տեսակարար ծավալային կարողությունը	$\frac{5000}{6,79 \times 2,39 \times 1,34} = 207$ կվա/մ ³	$\frac{6020}{6,79 \times 2,39 \times 1,61} = 230$ կվա/մ ³
3. Տեսակարար ծավալային կարողության մեծացումը	—	—

11%

Ուցիոնալիզացիայի հեղինակների գաղափարի համաձայն, նոր տրանսֆորմատորի աշխատանքային աստիճանները պետք է լինեն առաջին և երկրորդ աստիճանները (136 և 143 վ) այն հիման վրա, որ նրանք շատ թե քիչ շաղկապված են գոյություն ունեցող տեղակայումի պարամետրների հետ՝ ցածր կողմից (կոնստրուկտիվ, էլեկտրական և տեխնոլոգիական):

Մնացած աստիճանները (151—160—170 վ) նախատեսված են ապագայում վառարանային ապրեգայումի համար կապիտալ վերասարացվորման համար, որի դեպքում այդ բարձրացված լարումներն անհրաժեշտ կլինեն վառարանի աշխատանքի նոր պայմաններուամ, երբ կարողությունը 7500 կվա-ից բարձր կլինի:

Կաբելային գիծը տովորաբար նախագծվում է որոշ պաշարով, ըստ կորվածքի: Հին կաբելային գծի գոյությունը տակացող կորվածքը բավարարուամ է մաքսիմալ աստիճանի բեռնավորմանը.

$$S = \sqrt{3} \cdot 680 \cdot 6,3 = 7400 \text{ կվա:}$$

Հետազոտուումը ցույց է տալիս, որ բարձրավոլու հանգույցի այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝ ՎՄ—22 յուղային անջատիչները, անցումնային մեկուակիչները և 6,3 կվ շինաները, մնում են անփոփոխ: Փոփոխման են ենթակա միմիայն հոսանքի գծային տրանսֆորմատորները: Ապահովության համար նպատակահարմար է յուղային անջատիչի կոնտակտները նույնպես փոխարինելու կազմակերպությունը:

Կարողության գործակիցը (Cosφ) 136 վ աս-


$$\text{տիճանի վրա կազմի } \text{Cosφ} = \sqrt{1 - \left| \frac{I_x}{U_s} \right|^2}, \quad \text{որ-}$$

տեղ՝ $I = 25500$ ա հոսանքի ուժն է,

$x = 211 \times 10^{-5}$ օնիմ վառարանի կոնտուրի ուեակ-
տիվ գիմադրությունն է,

$$U_{\Phi} = 77,7 \text{ V} \quad \text{Փազալին լարում } \xi, \\ \cos \varphi = \sqrt{1 - \left(\frac{25500 \times 111 \times 10^{-5}}{136 : 1,73} \right)^2} = \\ = \sim 0,933;$$

136Վ լարման դեպքում աճեցված վառարանի հիմնական էլեկտրական պարամետրների փոփոխությունների լրիվ պատկերը հոսանքի ուժի աճման փոմնկցիայում ներկայացված է Ռիկե-ի դիագրամում (նկ. 1), որտեղ՝



նկ. 1. Նարբիդային վառարանի բևոնավորման բնութագրերը տրանսֆորմատորի վերակառուցումից հետո:
Լարման աստիճանը՝ 136 Վ:

Բ պոտ կորագիծը կարողության կորուստներըն է կոնտուրում,

$\cos \varphi$ կորագիծը—կարողության գործակիցը,

$P_{\text{ռ.ս}}$ կորագիծը—օգտակար կարողությունը,

$P_{\text{ա.կ}}$ կորագիծը—լրիվ ակտիվ կարողությունը,


25500 ա նոմինալ հոսանքին, 136 Վ աստիճանի համար, որով գլխավորապես ընթանալու է վառարանի շահագործումը, համապատասխանում է 5717 կվա լրիվ ակտիվ կարողությունը.

$$P_{\text{ա.կ}} = 3I^2 \sqrt{\left(\frac{U_{\Phi}}{I}\right)^2 - x^2}$$

$$P_{\text{ա.կ}} = 3 \cdot 25500^2 \sqrt{\left(\frac{136 : 1,73}{25500}\right)^2 - \left(111 \times 10^{-5}\right)^2} = \\ = 5617 \text{ կվա կամ թվացող կարողության վերածելով:}$$

$$\frac{P_{\text{ա.կ}}}{\cos \varphi} = \frac{5617}{0,933} = 6020 \text{ կվա}$$

143Վ լարման համար բեռնավորման բնութագրերը տրված են 2-րդ նկարում:



նկ. 2. Կարբիդային վառարանի բեռնավորման բնութագրերը տրանսֆորմատորի վերակառուցումից հետո:
Լարման աստիճանը՝ 142 Վ:

Տնտեսական էֆեկտը

Նախնական հաշվամները ցույց են տվել, որ 6020 կվա տրանսֆորմատորի բեռնավորման դեպքում վառարանի արտադրողականության բարձրացումը պետք է կազմի մոտ 20%: Մինչդեռ իրականում գերազանցվել են հաշվարկային ենթադրությունները: Վերակառուցված վառարանի շահագործման առաջին տարվա տվյալների համաձայն, էլեկտրաէներգիայի և հումքի նորմալ մատակարարման դեպքում, նրա արտադրույականությունը բարձրանում է մինչև 30%:

Միութենական մասշտաբով բովոր փոքր կարողության վառարաններում տվյալ միջոցառումը կիրառելու դեպքում կավելացվի կալցիումի կարբիդի համամիութենական լրացուցիչ արտադրանքը մի քանի տասնյակ հազար տոննա քանակությամբ: